ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

## ՓՈՔՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

2. ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍԻՆ

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՀՐԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՌԵԼԻԵՖԸ , ԲՆԱԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

5. ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

6. ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ , ԿՐԹԱԿԱՆ , ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ և ՍՊՈՐՏԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

7. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՆՍԱԿԱՆ և ԿՈՄՈՒՆԻԿԱՑԻՈՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

8. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

9. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

10. ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

11. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ և ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

12. ԸՍՏ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋԸՆԹԱՑ ԾՐԱԳՐԵՐԻ , ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ և ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁևԱԿԵՐՊՈՒՄ

13. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փոքրաշեն համայնքի 2017-2021 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶՀԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման հնգամյա ծրագիր:

ՀԶՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶՀԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները: ինչպես նաև՝ «Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպության կողմից մշակված և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից 2014 թվականին հավանության արժանացած «Համայնքի զարգացման քառամյա ծրագրի մշակման և կառավարման մեթոդաբանության» կիրառման ուղեցույցի մեթոդաբանական առանձնահատկությունները և ծրագրային հիմքերը:

## 1. ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍԻՆ

Փոքրաշեն գյուղը գտնվում է Շիրակի մարզում, Երևան-Գյումրի-Բավրա գլխավոր մայրուղու 14-րդ կմ հատվածում, սահմանակից է մարզի հինգ գյուղերի վարչական տարածքների հետ: Դրանք են՝ Թորոսգյուղ, Մեծ Սարիար, Արփենի, Կարմրաքար և Քեթի:

Գյուղը հիմնադրվել է 1827թ. ներկայիս տեղում, բնակչությունը գաղթել են Բասենի գավառի Ախա գյուղից:

Վարչական տարածքը կազմում է 706.34հա, որից գյուղի բնակատեղը՝ 28,93հա:

## 2. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՀՐԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՌԵԼԻԵՖԸ, ԲՆԱԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Գյուղի աշխարհագրական դիրքը լեռնային է: Փոքրաշեն համայնքը գտնվում է ծովի մակերևույթից 2000մ բարձրության վրա, Ախուրյանից հյուսիս-արևելք 15կմ, Գյումրիից 12կմ հեռավորության վրա:

Կլիմայական պայմաններն անբարենպաստ են: Տարվա եղանակներից անհամեմատ լավ է ամառը՝ հաճախակի քամիներով, գարունը սովորաբեր ուշ է գալիս, իսկ ձմեռը սաստիկ ցրտաշունչ է:

Տարեկան տեղումները քիչ են, սովորաբոր՝ կարկտի տեսքով;

Գյուղը գտնվում է ուժեղ սեյսմիկ գոտում, դրա վառ ապացույցն էր հադնդիսանում 1988թ.-ի երկրաշարժը:

Գյուղը խմելու ջուր ստանում է համայնքի վարչական տարածքներում գտնվող լեռնային աղբյուրներից: Չկա ոռոգման ջուր:

| թ/թ | | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
|---|---|---|---|---|---|---|
| Բնակչության թիվը | | 241 | | | | |
| Տղամարդ | | 134 | | | | |
| Կին | | 107 | | | | |
| Կրթությունը | Բարձրագույն | 22 | | | | |
| | Միջն. մասնագիտական | 31 | | | | |
| | Միջնակարգ | 140 | | | | |
| | Ութնամյա | 12 | | | | |
| | Տարրական | - | | | | |
| Նպաստառուների թիվը | | 3 | | | | |
| Տնտեսությունների թիվը | | 47 | | | | |
| Ծնունդ | | 5 | | | | |
| Մահ | | - | | | | |
| Արտագնա աշխատանք | | 33 | | | | |
| Ժամանակավոր բացակայողներ | | 8 | | | | |
| Ժամանակավոր բնակվողներ | | 15 | | | | |
| Դպրոցական տարիքի 7-17 տարեկաններ | | 18 | | | | |
| Ծնողազուրկ երեխաներ | | - | | | | |
| Աշխատունակներ | | 97 | | | | |
| Թոշակառուներ | | 22 | | | | |
| Հաշմանդամներ | | 6 | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Բնակարանի կարիքավորներ | 10 | | | | |

## ԻՆՉ՞ Է ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Հնգամյա ծրագիրն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ - տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտ ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությանբ համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավորման գործընթացի իրականացումը:

*Տեղական ինքնակառավարման մարմիններ*

Տեղական ինքնակառավարումն համայնքում իրականացվում է համայնքի ղեկավարի և ավագանու միջոցով: 2014 թվականի ապրիլին կայացած ՏԻՄ ընտրություններում համայնքի ղեկավար է վերընտրվել Կարեն Համլետի Վարդանյանը:

Համայնքի ղեկավարի աշխատակազմը բաղկացած է 2 աշխատակցից, համայնքի ավագանին բաղկացած է 5 անդամից:

Փոքրաշենի գյուղական համայնքի աշխատակազմն ունի հետևյալ կառուցվածքը.



**Տեղեկություններ համայնքի ղեկավարի և աշխատակազմի աշխատակիցների վերաբերյալ**

| Հ/Հ | Անուն,ազգանուն | Զբաղեցրած պաշտոնը | Կրթությ ո ւ ն . | Մասնագիտ. | Ծննդյան տարեթիվ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Վ ար դ ան յ ան Կ ար ե ն | հ ամ այ ն ք ի ղ ե կ ավ ար | բ ար ձ ր ագ ո ւ յ ն | մ ան կ ավ ա ր ժ | 19.02.1980 |
| 2 | Մ ո վ ս ի ս յ ան Մ ե լ ան յ ա | Առ աջ ատար մ աս ն ագ ե տ | մ ի ջ . մ աս ն . | հ աշ վ ապա հ | 14.02.1962 |
| 3 | Վ ար դ ան յ ան Ռ ո բ ե ր տ | աշ խատակ ազ մ ի ք ար տո ւ ղ ար | բ ար ձ ր ագ ո ւ յ ն | տն տե ս ագ ե տ | 01.11.1989 |

***Համառոտ տեղեկություններ համայնքի ավագանու մասին***

Փ ո ք ր աշ ե ն համայնքի ավագանին ընտրվել է 2016 թ վ ակ ան ի հ ո կ տե մ բ ե ր ի 2-ին և կազմված է 5 անդամներից:

| | Անուն, ազգանուն | Ծննդյան տարեթիվը | Կրթությունը | Մասնագիտությունը |
|---|---|---|---|---|
| 1 | Յ ո վ հ ան ն ի ս յ ան Օ ն ի կ | 1969 | մ ի ջ / մ աս ն . | շ ի ն ար ար |
| 2 | Վ ար դ ան յ ան Ար թ ո ւ ր | 1985 | մ ի ջ ն ակ ար գ | - |
| 3 | Ս աh ակ յ ան Վ ար դ ան | 1983 | մ ի ջ ն ակ ար գ | - |
| 4 | Պ ար ս ամ յ ան Ս վ ե տի կ | 1984 | մ ի ջ / մ աս ն . | մ ան կ ավ ար ժ |
| 5 | Պ ար ս ամ յ ան Գ ր ի շ ա | 1990 | մ ի ջ ն ակ ար գ | - |

*Կոմունիկացիոն համակարգեր*

Համայնքի խմելու ջրի մատակարարումը շուրջօրյա է: Համայնքը սնուցվում է համայնքի վարչական տարածքում գտնվող լեռնային աղբյուրներից, որոնց ջուրը հավաքվում է 100 խոր.մ տարողությամբ ՕՉՋ-ից: Համայնքի խմելու ջրի պահանջներն օրական կազմում են 1000-1200 լիտր:

Համայնքը գազաֆիկացված չէ:

Համայնքի տնտեսությունները ապահովված չեն կոյուղագծերով:

Համայնքի տնտեսությունները ապահոված չեն ֆիքսված հեռախոսակապով, իսկ գրեթե բոլոր տնտեսությունները օգտվում են Վիվա-Սել-ՄՏՍ ընկերության կողմից սպասարկվող ինտերնետային կապից:

Անհրաժեշտ է կատարել փողոցների նորոգում, ջրահեռացման ապահովում, գազաֆիկացում, կոյուղագծերի անցկացում և փողոցների լուսավորության անցկացում:

*Համայնքի կոմունիկացիոն կառույցների նկարագիրը*

| h/h | Անվանումը | Չափման միավորը | Քանակը | Կատարման | Ենթակա է վերանորոգման | Վերանորոգված | Նոր կառուցված | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տնային հեռախոսակապ | - | - | | | | | |
| 2 | Էլեկտրաֆիկացում | | 44 | | | | | |
| 3 | Ինտերներային կապ | | 22 | | | | | |
| 4 | Կենտրոնացված ջրամատակարարում | | 44 | | | | | |
| 5 | Կենտրոնացված կոյուղի | | - | | | | | |

*Բնակարանային տնտեսություն*

Համայնքն ունի 21 առանձնատուն: Անապահով ու բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը 26 է:

*Համայնքի հողային հաշվեկշիռը*

Շիրակի մարզի Փոքրաշենի համայնքի ղեկավարի կողմից 01.07.2016թ. դրությամբ կազմված հողային հաշվեկշիռն, ըստ

նպատակային նշանակության, հողատեսքերի և սեփականության սուբյեկտների.

1. Գյուղատնտեսական նշանակության հողեր 706,34 հա:
2. Բնակավայրի հողեր 28,93 հա, որից տնամերձ 17,44հա:
3. Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր 4,31 հա:
4. Էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր 5,86 հա:
5. Հատուկ պահպանվող տարածքների հողեր 0,72 հա:
6. Հատուկ նշանակության հողեր 0 հա:
7. Անտառային հողեր 0 հա:
8. Ջրային հողեր 0հա:
9. Պահուստային հողեր 0 հա:

Քաղաքացիների սեփականության հողեր 17.44 հա:
Իրավաբանական անձանց հողեր 0 հա:
Համայնքային սեփականության 722,1 հա:
Պետական սեփականության հողեր 6.62 հա:

## *ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ*

Համայնքը օգտվել է հողերի սեփականաշնորհումից, որի արդյունքում յուրաքանչյուր բնակչի հատկացվել է 0,12հա տնամերձ:

Չկան աշխատատեղեր, այդ իսկ պատճառով բնակչության արտահոսքը արտերկրներ մեծ է:

Գյուղատնտեսական նշանակության հողերի պատկերը հետևյալն է՝ 706,34 հա:

Վարելահողեր՝ -120,01հա:
Տնամերձ – 17,44հա
Անասնապահությունը, որից
Խոշոր եղջերավոր անասուններ – 149
Մանր եղջերավոր անասուններ – 372

Մարդատար ավտոմեքենաներ – 28 հատ:

Բնակիչների միակ եկամուտը նպաստն ու թոշակն են:

Փոքրաշեն համայնքն իր բնագավառին բնորոշ գործունեությունը կազմակերպում է
ա/միջնակարգ դպրոցի միջոցով:

### *Արտադրություն*

Փոքրաշենի համայնքում արդյունաբերական ձեռնարկություններ չկան:

### *Կրթություն*

Կրթական գործը համայնքում կազմակերպվում է համայնքի միջնակարգ դպրոցում, որը գործում է քարաշեն շենքում: Դպրոց են հաճախում 18 աշակերտներ:

*Մշակույթ, սպորտ*

Համայնքը չունի մշակույթի կենտրոն, գրադարան:

### *Առողջապահություն*

Համայնքը չունի բուժկետ: Անհրաժեշտության դեպքում բնակչությունն օգտվում է Մայիսյան գյուղի առողջության կենտրոնից:

### *Համայնքի ուժեղ կողմերը*

1. Համայնքը գտնվում է միջպետական նշանակություն ունեցող Երևան-Գյումրի-Բավրա մայրուղու վրա:

### *Համայնքի թույլ կողմերը*

1. Գործազրկության բարձր մակարդակը
2. Ճանապարհների անմխիթար վիճակը
3. Գազաֆիկացման բացակայությունը
4. Ոռոգման ջրի բացակայությունը
5. Եղանակի ոչ համաչափ բաշխվածությունը (երկարատև ձմեռ)
6. Ազգաբնակչության սոցիալ-տնտեսական պայմանների ցածր մակարդակը և անվճարունակությունը:

### *Համայնքին սպառնացող վտանգները*

հոգևոր- մշակութային կյանքի իսպառ վերացումը
ներհամայնքային ճանապարհների անբարեկարգ լինելը
Խմելու ջրագծերի ոչ լավ վիճակ
Գյուղատնտեսական նշանակության հողերի ոռոգման պակաս

### *Համայնքի ռազմավարությունն ու հիմնական նպատակները*

### *Կոմունիկացիոն խնդիրները*

Շուրջօրյա ջրամատակարարման ապահովում
ներհամայնքային բոլոր ճանապարհների բարեկարգում
միջհամայնքային ճանապարհների բարեկարգում
բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում
գյուղատնտեսության և անասնապահության շահութաբերության բարձրացում

### *Կառուցապատում*

Համայնքային կենտրոնի կառուցում

### *Գյուղատնտեսություն*

Անասնապահության զարգացում

*Բնակարանային տնտեսություն*

Հիփոթեքային վարկավորման միջոցով հին և կիսավքարային բնակարանների ներանորոգում- ամրացում, նոր բնակելի տների կառուցում

*Մշակույթ և սպորտ*

Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների կազմակերպում

*Բնապահպանություն*

Կենտրոնացված աղբահանության կազմակերպում, ամենամյա ծառատնկում:

**ԾՐԱԳԻՐ 1**

Ներհամայնքային ճանապարհների փոսալցում, նորոգում:

**ԾՐԱԳԻՐ 2**

Փոքրաշեն համայնքում խմելու ջրի ջրագծի հզորացման ավելացում:

**ԾՐԱԳԻՐ 3**

Համայնքի փողոցային լուսավորության անցկացում:

**ԾՐԱԳԻՐ 4**

Համայնքային կենտրոնի կառուցում, որին իր մեջ ներառում է համայնքային գրադարանը և գյուղի երիտասարդության ժամանցային կենտրոն:

**ԾՐԱԳԻՐ 4**

Համայնքի գազաֆիկացում:

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ , ՄԵՔԵՆՔՆԵՐԻ , ԳՅՈՒՂՏԵԽՆԻԿԱՅԻ ՈՒ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

| | Անվանումը | Քանակը | Ֆիզիկական վիճակը (սարքին) |
|---|---|---|---|
| 1 | Բեռնատար ավտոմեքենաներ | 2 | սարքին |

## ՓՈՔՐԱԾԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ_ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

| | ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ | Չափի միավոր | 2017թ. Նախատ | 2018թ. Նախատ | 2019թ. Նախատ | 2020թ. Նախատ. |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Համայնքի տարածքը | հա | 706,34 | | | |
| 2 | Բնակչության թիվը | մարդ | 241 | | | |
| 3 | Ծնունդ | մարդ | 5 | | | |
| 4 | Մահացություն | մարդ | - | | | |
| 5 | Աշխ. ռեսուրսները, այդ թվում զբաղվածներն ըստ տնտ. ճյուղերի | մարդ | 113 | | | |
| 6 | Գործազրկության մակարդակը | % | 70 | | | |
| 7 | Առևտրի և հասարակական սննդի օբյեկտների թիվը | - | - | | | |
| 8 | Պահուստային հողեր | - | - | | | |
| 9 | Պահուստային հողերի օգտագործման մակարդակ | - | - | | | |
| 10 | Խմելու ջրագծերի ներհամայնքային ցանցի երկարությունը | գծ/մ | 2500 | | | |
| 11 | Ներհամայնքային ոռոգման ցանցի երկարությունը | - | - | | | |
| 12 | Ոռոգման համակարգի տակ ընկած հողեր | հա | - | | | |
| 13 | Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը | կմ | 2500 | | | |
| 14 | Չբարեկարգված փողոցների և ճանապարհների երկարությունը | կմ | 2000 | | | |

|  |  |  |  |  |  |  |
|---|---|---|---|---|---|---|
| 15 | Մասնավոր բնակ. ֆոնդ | հազ.քմ | - |  |  |  |
| 16 | Բնակելի տան կարիքավոր ընտանիքների թիվը | հատ | 15 |  |  |  |
| 17 | Մեկ շնչին ընկնող ջրի սպառումը,լ. | 1 օր | 5 |  |  |  |
| 18 | Ջրի կորուստները ցանցում | % | 40 |  |  |  |
| 19 | Սովորողների թիվը հանրակրթական դպրոցում | մարդ | 18 |  |  |  |
| 20 | Երեխաների թիվը մանկապարտեզում | մարդ | - |  |  |  |
| 21 | Գյուղապետարանի և ենթակառուցվ. Աշխատողների թիվը | մարդ | 2 |  |  |  |

Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի ֆիզիկական վիճակը

1. Վագոն-տնակ /գրասենյակ/ - 1 հատ
2. Բնակելի տուն – 15 հատ
3. Աթոռ – 4 հատ
4. Գրասեղան – 2 հատ
5. Պահարան – 1 հատ
6. Գրքեր – 1500 կտոր

## ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքում կոնկրետ ծրագիր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը: ՀՀ Շիրակի մարզի Փոքրաշենի համայնքում այն ունի հետևյալ պատկերը.

|  | Եկամուտի տեսակը | 2017 փաստ. | Կանխատեսում |  |  |  |
|---|---|---|---|---|---|---|
|  |  |  | 2018 | 2019 | 2020 | 2021 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ա | ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ | | | | | |
| 1 | Հողի հարկ | 19,2 | | | | |
| 2 | Գույքահարկ ընդամենը | 412,8 | | | | |
| 3 | Տեղական տուրքեր | | | | | |
| Բ | ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | | | | | |
| 4 | Պահուստային հողերի վարձավճարներ | 295,4 | | | | |
| 5 | Գույքի վարձակալության վճարներ | | | | | |
| 6 | Տեղական վճարներ | | | | | |
| 7 | Այլ ոչ հարկային եկամուտներ | | | | | |
| 8 | Ազատ միջոցներ | | | | | |
| Գ | **ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ՝ դոտացիա** | **3775,0** | | | | |
| Դ | ՏԱՐԵՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴ | | | | | |

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Փոքրաշենի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագիրն հիմք է հանդիսանալու համայնքի տարեկան ծրագրերի, բյուջեների մշակման և կատարման աշխատանքները կազմակերպելիս:

Ելնելով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագրի ռազմավարությունից և ընդհանուր նպատակներից, շատ կարևոր է սեփական եկամուտների լրացուցիչ աղբյուրներ գտնելը, ֆինանսական միջոցների արդյունավետ հավաքագրման կազմակերպումն ու նպատակային օգտագործումը;

2017- 2021 թթ. համայնքային բյուջեները պետք է մշակել որպես զարգացման ծրագրային բյուջեներ, որոնցով հնարավոր կլինի իրականացնել ինչպես ընթացիկ և հիմնական վերանորոգման աշխատանքներ, այնպես էլ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր:

Համայնքի զարգացման կոնկրետ ծրագրեր կարելի է ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարություն, Շիրակի մարզպետարան, լրացուցիչ ներդրումներ հայթայթելու նպատակով: Նախատեսվում է փնտրել ինվեստիցիաների նոր աղբյուրներ, ներգրավել գործարարների սեփական միջոցները, տարբեր սոցիալական հիմնադրումների ներդրումները:

Համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը կազմվել է համայնքի ռազմավարության առաջնահերթ ծրագրերի ընդգրկման ու ֆինանսական միջոցների ապահովման հնարավոր համադրմամբ ու իրագործելիության բարձր հավանականությամբ :